ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԱՀԵՆ
Երևանի պետական համալսարան
Էլ. հասցե՝ Sh.harutyunyan.edu@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i46.135

ԱՄՓՈՓՈՒՄ

20-րդ դարի 1960-ական թվականներին ԽՍՀՄ-ում սկիզբ առած այլախոհական շարժումները Խորհրդային Հայաստանում ունեցան երեք առաջնային գաղափարախոսական ուղղություն: Խորհրդային Հայաստանում այլախոհությունը դրսևորվում էր հիմնականում ազգային հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ Հայոց ցեղասպանության հիշատակումը, Ղարաբաղը և Նախիջևանը հայրենիքին վերամիավորելու պահանջները, հայոց լեզվի պահպանումը, Հայաստանի անկախության վերականգնումը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Խորհրդային Հայաստանում ստեղծված գաղտնի խմբերի նպատակներն ու ծրագրերը կրում էին այդ շարժումների գաղափարական դրոշմը: Սակայն Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարը, որը սկսվեց այլախոհության ժամանակաշրջանի սկզբում և տևեց մինչև ԽՍՀՄ փլուզումը, առանցքային նշանակություն ունեցավ այլախոհական պայքարի ընթացքում:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել հայկական այլախոհության գաղափարախոսական ուղղությունները և դրանց դրսևորումները:

Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել հետազոտել և քննարկել Խորհրդային Հայաստանում հիմնադրված այլախոհական կազմակերպությունները, անհատական մոտեցումները, որոնք իրենց ծրագրերում և գործունեության ընթացքում ամբողջացրել են հայկական այլախոհության գաղափարական բոլոր ուղղությունները:

Հետազոտությունը կատարվել է պատմական, պատմահամեմատական մեթոդների միջոցով: Իրականացվել է պետական և անձնական արխիվային նյութերի, հարցազրույցների, հուշագրությունների վերլուծություն:

Հիմնավորվել է, որ Խորհրդային Հայաստանում այլախոհական դրսևորումները ունեին երեք առանցքային գաղափարական ուղղություն, որոնք տարբեր շրջափուլերում ունեցել են տարբեր առաջնահերթություններ:

Եզրակացությունն այն է, որ թեև, այլախոհական շարժումը դրսևորվում էր երեք կարևոր, անկյունաքարային գաղափարախոսությունների շուրջ, այդուհանդերձ, առաջնային դեր ու նշանակություն ուներ Հայաստանի անկախության վերականգման համար մղվող պայքարը:

Բանալի բառեր՝ այլախոհություն, հողային պահանջատիրություն, Հայոց ցեղասպանություն, անկախության վերականգնում, «Ազգային Միացյալ կուսակցություն», «Հայ երիտասարդական միություն», «Շանթ», Հայաստանի հելսինկյան խումբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի 60-ական թվականներից ԽՍՀՄ-ում սկզբնավորված այլախոհական շարժումները լայն թափ ստացան նաև Խորհրդային Հայաստանում: Հետստալինյան ժամանակաշրջանին բնորոշ «Խրուշչովյան հալոցքի» քաղաքականությունը պարարտ հող էր առաջացրել այլախոհական մտքի ձևավորման և տարածման համար: Ինչպես Խորհրդային Միության շատ հանրապետություններում, այդպես էլ Խորհրդային Հայաստանում, ձևավորվեցին այլախոհական շարժումներ, որոնց ժամանակագրությունը ձգվեց՝ հասնելով ԽՍՀՄ փլուզումը:

Խորհրդային Հայաստանում այլախոհության դրսևորման գաղափարական հիմքերը տարբեր էին և ունեին տեղային առանձնահատկություններ: Թեև այլախոհության սկզբնական շրջանում, այլախոհական մտքի և գաղափարախոսության վրա կնիքված էր հայ ժողովրդի պատմական դառը անցյալի հիշողությունները, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում հայկական այլախոհությունը գաղափարապես ամրապնդվեց՝ նոր սկզբունքներ և նպատակներ դնելով իր առաջ:

1960-80-ական թվականներին Խորհրդային Հայաստանում այլախոհության գաղափարական հիմքում հիմնականում ընկած էին՝ *հողային պահանջատիրությունը*, *հայոց լեզվի պաշտպանությունը*, *1915թ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանության մասին բարձրաձայնումը*, *Հայաստանի անկախության վերականգման համար պայքարը*, *մարդու իրավունքների պաշտպանությունը*: Այս հարցերի շուրջ ձևավորվեց հայկական այլախոհությունը, որը, ունենալով գաղափարական հասունացման տարբեր մակարդակներ, շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Վերոնշյալ հարցերի շուրջ այլախոհական դրսևորումները թե՛ անհատապես էին, թե՛ կազմակերպված բնույթով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրությունը կրում է համապարփակ հետազոտական բնույթ, որը ներառում է պատմական և համեմատական մեթոդներ՝ 1960-ականների ընթացքում Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների գաղափարական ուղիներն ուսումնասիրելու համար:

Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումներին առնչվող պետական և անձնական արխիվային նյութերի ծավալուն բովանդակային վերլուծություն է իրականացվել: Սա ենթադրում է պաշտոնական փաստաթղթերի, արձանագրությունների և ցանկացած առկա նյութի ուսումնասիրություն, որն արտացոլում է ժամանակի հասարակական-քաղաքական մթնոլորտը:

Արխիվային նյութերի, հարցազրույցների և հուշերի ընտրությունը հիմնված էր այլախոհական շարժումների գաղափարական համապատասխանության վրա: Հիմնական ուշադրությունը հատկացվել է այն նյութերին, որոնք լույս են սփռում այլախոհության համար առանցքային ազգային խնդիրների վրա, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությունը,

վերամիավորման պահանջները, լեզվի պահպանումը, անկախության վերականգնումը և մարդու իրավունքների պաշտպանությունը:

Օգտագործվել է տվյալների վերլուծության համակարգված մոտեցում՝ ներառելով արդյունքների դասակարգումը և մեկնաբանումը: Գաղափարական երեք հիմնական ուղղություններին առնչվող թեմաները ուսումնասիրվեցին տարբեր ժամանակաշրջաններում՝ զարգացող առաջնահերթությունները պարզելու համար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հողային պահանջատիրությունը, ցեղասպանության մասին բարձրաձայնման պայքարը և հայոց լեզվի մաքրության պահպանությունը

Հայկական այլախոհության մեջ իր առաջնային և ուրույն նշանակությունն է ունեցել հայկական պատմական հողերի՝ Ղարաբաղի և Նախիջևանի՝ Հայաստանին վերամիավորելու պահանջն ու Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանության մասին բարձրաձայնումը, ինչպես նաև հայոց լեզվի մաքրության պահպանությունը: Վերոնշյալ ողբերգական իրադարձությունները կես դարից ավելին պահպանվել էր հայ ժողովրդի հիշողություններում, որոնք արտացոլվեցին հայկական այլախոհության գաղափարախոսության վրա՝ ձևավորելով պայքարի առանձին ուղղություն:

Ազգային հարցերի բարձրաձայնումը՝ հողային պահանջատիրությունը, ցեղասպանության մասին հիշատակումը, հայոց լեզվի պաշտպանությունը, սկզբանական շրջանում ուղիղ հակադրություն և սպառնալիք չէին ստեղծում Խորհրդային Միության համար: Հողային պահանջատիրությունը և ցեղասպանության մասին բարձրաձայնումը տեղավորվում էր ԽՍՀՄ քաղաքականության թույլատրելիության սահմաններում: 1960-ական թվականների սկզբին Խորհրդային իշխանություններն իրենց վարած քաղաքականության մեջ նույնպես ունեին որոշ հակաթուրքական դրսևորումներ, որոնց արդյունքում որոշում կայացվեց Երևանում Հայոց եղեռնի հուշահամալիր կանգնեցնել ու ցեղասպանության 50-րդ տարելիցին նվիրված պետական միջոցառումներ իրականացնել (Հայոց պատմություն, 2016): Թե՛ այս միջոցառումները և հուշահամալիրի տեղադրումը, թե՛ որոշ գրական գործերի տպագրումները, ինչպիսիք էին 1950 թվականին հրատարակված Խաչիկ Դաշտենցի «Խոդեդան» վեպը, 1961 թվականին լույս տեսած Ս. Խանզադյանի «Մխիթար սպարապետ» վեպը, ավելի բորբոքեցին հայ հայրենասիրական շրջանակներին՝ առաջացնելով հակաթուրքական տրամադրություններ, որոնք գործնական բնույթ ստացան այլախոհական շարժումների ընթացքում: Մի կողմից «Խրուշչովյան հալոցքի» քաղաքականության տարիները, մյուս կողմից՝ Թուրքիայի հետ հարաբերություններում ԽՍՀՄ քաղաքականության որոշ փոփոխություններն ու վերապահումները (Հարությունյան Շ., 2023), հստակեցրել էին այն սահմանները, որոնց շրջակայքում ձևավորված էր հայկական այլախոհությունը սկզբնական շրջանում: Այնուամենայնիվ, ցանկացած դրսևորում, որն ավելին էր, քան թույլատրելիության սահմանը, խստագույնս պատժվում էր Խորհրդային իշխանությունների կողմից:

Խորհրդային Հայաստանում ձևավորված ընդհատակյա շատ կազմակերպությունների գլխավոր նպատակներն էին պայքարել Ղարաբաղի և Նախիջևանի՝ Խորհրդային Հայաստանին վերամիավորման համար, բարձրաձայնել ցեղասպանության մասին և իրականացնել հայոց լեզվի պահպանությանը միտված քայլեր:

1962թ. Երևանում ստեղծված «Հայ երիտասարդական միությունում», որտեղ հավաքված էին հասարակության տարբեր շերտեր՝ ուսանողներից մինչև դասախոսներ և մտավորականներ, շոշափում էին հայոց լեզվի պահպանման և ռուսական լեզվի մեջ միաձուլվելուց փրկելու հարցեր, Ցեղասպանության հիշատակի օրը նշելը, կորցված հայկական տարածքների վերադարձնելը (Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 1191, ց. 20, գ. 2):

1966-67թթ. Խորհրդային Հայաստանում գործունեություն է ծավալել մեկ այլ ընդհատակյա կազմակերպություն, որը կոչվել է «Հայաստանի վերամիավորման շարժում» (Հարությունյան Վ., 2014): Ընդհատակյա կազմակերպության անունից անգամ երևում է, որ այս կազմակերպությունը ևս իր առջև խնդիր է դրել Խորհրդային Հայաստանին վերամիավորել հայկական պատմական կորսված հողերը: Այս կազմակերպության տարածված մի թռուցիկում կոչ էր արվում հայ ժողովրդին միանալ հայկական հողերի՝ Խորհրդային Հայաստանին միավորելու պայքարին:

1967-68թ. Խորհրդային Հայաստանում գործունեություն ծավալած «Հայ հայրենասերների միություն» ընդհատակյա կազմակերպությունը. նույնպես հիմնական գործունեության առանցք էր համարում հայոց ցեղասպանության, Ղարաբաղի, Նախիջևանի և այլ ազգային խնդիրների մասին բարձրաձայնումը: Խմբի անդամները պարբերաբար կազմակերպում էին հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկում էին իրենց առջև դրված խնդիրները: Ընդահատկյա կազմակերպության անդամները պատրաստել և տարածել են Հայոց ցեղասպանության 52-րդ և 53-րդ տարելիցին նվիրված թռուցիկներ (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 4):

1968թ. սկզբից Խորհրդային Հայաստանում գործունեություն ծավալած «Հանուն հայրենիքի» ընդհատակյա կազմակերպույթան հիմնական նպատակներն էին Հայոց ցեղասպանության, կորսված հայկական տարածքների՝ Ղարաբաղի և Նախիջևանի մասին բարձրաձայնման, հայոց լեզվի պահպանմանն ուղղված քայլերը (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6):

1969թ. աշնանը Խորհրդային Հայաստանում գործունեություն ծավալած «Հայաստանի վերամիավորման միությունը» ընդհատակյա կազմակերպությունը նույնպես արտացոլում էր ժամանակաշրջանի գաղափարախոսական տարրերը՝ առաջնային տեղ հատկացնելով Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնման կարևորությանը և Հայաստանի կորուսյալ տարածքների՝ Նախիջևանի և Ղարաբաղի՝ Հայաստանին վերամիավորմանը: Կազմակերպության անդամները կազմակերպել են փակ հանդիպումներ, որտեղ հիմնականում քննարկվել է Ղարաբաղի և Նախիջևանի պատմական զարգացումն ու խնդիրները, ինչպես նաև Հայաստանին միավորելու վերաբերյալ հարցեր (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8):

Այլախոհության տարիներին, բացի կազմակերպությունների կողմից իրականացված քայլերի, կային նաև առանձին անհատական դրսևորումներ: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել Զավեն Հարությունյանի իրականացրած քայլերը: Զ. Հարությունյանը հավաքներ է իրականացնում աշակերտների շրջանակներում, քննարկում ազգային տարբեր հարցեր, որոնցում առաջնային նշանակություն է ունեցել Ղարաբաղի և Նախիջևանի միացումը Խորհրդային Հայաստանին և հայոց լեզվի անաղարտության պահպանումը: Հարությունյանը տպագրել է «Կոչ հայ մեծ ժողովրդին» վերնագրով և «Հայոց դատ» ստորագրությամբ թռուցիկ, որտեղ կոչ էր արվում պայքարել հայկական ոտնահարված իրավունքների համար:

Համանման գործունեությամբ է աչքի ընկել Լևոն-Արա Մնացականյանը, ում գործունեության առանցքում կրկին ընկած էին Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրները, որոնց լուծումը Մնացականյանը տեսնում էր Մոսկվայի բարի կամքի և կոմունիստական կուսակցության վարած ազգային արդար քաղաքականության արդյունքում (Հարությունյան Վ., 2014):

Հայաստանի անկախության վերականգման համար պայքարը

Այլախոհության առաջին տարիներից, թեև հիմնականում հայ այլախոհները հանդես էին գալիս հողային պահանջատիրության և ցեղասպանության մասին բարձրաձայնման դիրքերից, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում հայ հայրենասիրական-այլախոհական որոշ շրջանակներում սկսվեցին Հայաստանի անկախության վերականգման համար պայքարի մասին քննարկումներ: Այլախոհական միջավայրում գաղափարական հասունացման արդյունքում առաջ եկան մարդիկ, որոնք առաջնային կարևորության հարց դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը: Սա ամենակարևոր նպատակադրումն էր, որի շուրջ հիմնականում ձևավորվեց հայկական այլախոհության հետագա ընթացքը: Գաղափարական այս ուղղվածությունը խիստ հակադրվում էր ԽՍՀՄ-ին և սպառնալիք դառնում ռուսական կայսրության համար: Որքան էլ որ ՊԱԿ-ը միջոցներ էր ձեռք առնում (Бобков, 2021) պայքարելու անկախության համար պայքարող մարդկանց դեմ, այնուամենայնիվ, անկախության համար պայքարն ունեցավ իր հաղթական հանգուցալուծումը՝ հասնելով մինչև ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախության վերականգնումը:

Ինչպես մյուս գաղափարական ուղղվածությունները, այդպես էլ անկախության համար պայքարն ունեցել է անհատական և կազմակերպված դրսևորումներ: Անհատական դրսևորումները սկսվել են ավելի շուտ, որը հետագայում ստացել է կազմակերպված բնույթ: Հողային պահանջատիրությունը կամ այլ բույթի ազգային հարցերի մասին բարձրաձայնումը ընդհանուր առմամբ ուղղված չէր Խորհրդային պետության դեմ, սակայն լինում էին առանձին գործիչներ, որոնք բացի ազգային հարցերի մասին բարձրաձայնելուց խոսում էին Հայաստանի անկախության վերականգման մասին: Այս համատեքստում կարևոր է ընդգծել «Հայ երիտասարդական միություն» անունը կրող ընդհատակյա կազմակերպության անդամների՝ «Յոթ հայրենասերների գործ» անունը ստացած խմբի դատապարտված անդամ Մերուժան Հովհաննիսյանի մասին, ով, լինելով հողային

պահանջատիրության, ցեղասպանության մասին բարձրաձայնման, հայոց լեզվի պաշտպանության համար պայքարող խմբի մարտիկ, այնուամենայնիվ, գաղտնի հավաքույթների ընթացքում քննարկել և դատարանում հայտարարել է, որ «ցանկանում է ունենալ անկախ Հայաստան, որտեղ չեն լինի Խորհրդային կարգեր և կլինեն բուրժուա-ազգայնական կարգեր» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2):

1966թ. Խորհրդային Հայաստանում Հայկազ Խաչատրյանի, Շահեն Հարությունյանի և Ստեփան Զատիկյանի կողմից հիմնադրվում է «Ազգային Միացյալ կուսակցություն» (այսուհետ՝ ԱՄԿ) անունը կրող ընդհատակյա կազմակերպություն, որն իր առջև կարևորագույն նպատակ է դնում Հայաստանի անկախության վերականգնումը (Շահեն Հարությունյան անտիպ հուշագրություն, 7): Ուսումնասիրելով այս կազմակերպության ծրագիրը՝ տեսնում ենք, որ շարունակելով պահպանել ժամանակաշրջանի ոգուն և տրամաբանությանը համապատասխան գաղափարախոսությունը, այնուամենայնիվ, ԱՄԿ-ի առաջնային նպատակն էր *պայքարել Հայաստանի անկախության համար*: Ինչպես հատուկ ընդգծումով և մեծատառերով նշված է ԱՄԿ ծրագրի 6-րդ կետում՝ «ԱՄԿ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱԶԱՏԱԳՐԵԼ ԱԶԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» (Հարությունյան Վ., 2014): Ըստ ԱՄԿ հիմնադիրների՝ անկախ Հայաստանի Հանրապետության գոյությունը լավագույն հնարավորությունները կստեղծեր հայկական ազգային հարցերի դրական լուծման համատեքստում: ԱՄԿ-ն իր ստեղծումով ամբողջացրեց և կազմակերպված բնույթ հաղորդեց մինչև այդ հայ հայրենասիրական-այլախոհական շրջանակներում Հայաստանի անկախության վերականգման մասին արծարծվող թեմաներին ու մտքերին: Այս կազմակերպությունը դարձավ անկախության պայքարի ջահակիրը, որի անդամները ենթարկվում էին հալածանքների, դատապարտումների, աքսորների: Սակայն ԱՄԿ-ն, ի հեճուկս Խորհրդային կայսրության բռնաճնշումների, շարունակեց պահպանել իր գոյությունը և մշտապես կենսունակ պահել Հայաստանի անկախության համար մղվող պայքարը:

Անկախության գաղափարական ուղղվածությամբ մեկ այլ ընդհատակյա կազմակերպություն էր 1967թ. Պարույր Հայրիկյանի գլխավորությամբ ստեղծված «Շանթ» խումբը, որը ԱՄԿ-ի երիտասարդական կառույցն էր, և որի հիմնանպատակն էր ապագա ԱՄԿ-ականների պատրաստումը (Հայրիկեան, 2016, 8): Այս խմբի ստեղծումով ավելի է ամրապնդվել անկախության համար պայքարը՝ ամբողջական տեսք և հիմքեր հաղորդելով այլախոհության այս գաղափարական ուղղվածությանը:

Այս գաղափարական ուղղվածությանն էր պատկանում նաև 1978թ. ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբոր՝ Մարզպետ Հարությունյանի կողմից հիմնադրված «Հայ երիտասարդների միություն» ընդհատակյա կազմակերպությունը (Հարությունյան Վ., 2022), որի գլխավոր նպատակը Հայաստանի անկախության վերականգնումն էր: Այս կազմակերպության ծրագրում կոմունիստական կուսակցությունը համարվել է օրենքից դուրս (ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 23):

Մարդու իրավունքների պաշտպության շարժում

Հայկական այլախոհության ընդհանուր գաղափարախոսական մյուս ուղղվածությունը մարդու իրավունքների պաշտպանության շարժումն էր: Ի տարբերություն գաղափարական մյուս ուղղությունների՝ մարդու իրավունքների պաշտպանության շարժումը ոչ թե տեղային այլախոհության դրսևորում էր, այլ Խորհրդային տարբեր երկրներում սկիզբ առած ընդհանուր շարժում:

1975թ. ԽՍՀՄ-ը նույնպես ստորագրում է Հելսինկյան եզրափակիչ փաստաթուղթը, որը կարևորագույն նշանակություն է ունենում մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում: ԽՍՀՄ-ի ստորագրումից հետո Խորհրդային տարբեր Հանրապետություններում ստեղծվում են Հելսինկյան խմբեր, որոնք պայքարում էին մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համար: Հելսինկյան խմբեր են ձևավորվում Ուկրաինայում, Հայաստանում, Վրաստանում, Լիտվայում (Алексеева, 2012):

1976 թ. «Ազգային Միացյալ կուսակցության» հիմնադիրներից Շահեն Հարությունյանի նախաձեռնությամբ կազմակերպվում, իսկ 1977 թ. ապրիլին Մոսկվայում հայտարարվում է Հայաստանի հելսինկյան խմբի մասին (Հարությունյան Վ., 2014): Բացի Շահեն Հարությունյանից, խմբի անդամներ էին նաև Ռոբերտ Նազարյանը և Էդուարդ Հարությունյանը:

Հայաստանի հելսինկյան խմբի նկատմամբ ճնշումները սկսվում են 1977 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից: Այդ ամիսներին Մոսկվայի մետրոյի պայթյունի գործով ձերբակալվում են Ստեփան Զատիկյանը, Հակոբ Ստեփանյանը և Զավեն Բաղդասարյանը: Շահեն Հարությունյանը, տեղեկանալով ձերբակալությունների մասին, կապ է հաստատում արտասահմանյան թղթակիցների հետ և հայտնում տեղի ունեցող ձերբակալությունների մասին: Ստացված տեղեկություններն արագորեն տարածվում են արտասահմանյան մամուլում, որտեղ հղում էր կատարված Շահեն Հարությունյանին և Հայաստանի հելսինկյան խմբին:

Այս հայտարարության տարածումից մի քանի օր անց Շահեն Հարությունյանին ձերբակալում են և շինծու մեղադրանք ներկայացնում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 222 հոդվածով (խուլիգանություն) (Հարությունյան Վ., 2014):

Ռոբերտ Նազարյանը, 1976-77 թթ. ընթացքում կազմակերպել է դրամահավաքներ՝ ի նպաստ հայ քաղբանտարկյալների և նրանց ընտանիքների, փաստական տվյալներ հավաքել Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող մարդու իրավունքների ոտնահարումների մասին, տարածել հակախորհրդային գրականություն, որի համար նույնպես ձերբակալվել և դատապարտվել է ազատազրկման (ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 19):

Հայաստանի հելսինկյան խմբի կազմակերպումն իր վրա ստանձնած Էդուարդ Հարությունյանը, ներկայանալով Հելսինկյան խմբի անունից, տպագրում է մի շարք հոդվածներ, որտեղ Խորհրդային Միության քաղաքացիներին համարել է իրավազուրկ, խոսքի իրավունքից զրկված, փոքր ազգություններին՝ հալածված ու ճնշված: Հարությունյանը բարձրաձայնել է ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող ներքին և արտաքին խնդիրները, նշել, որ երկրում դեռևս գոյություն ունի ճորտատիրություն, իսկ

կառավարությունը ոտնահարում է մարդկանց իրավունքները: Այս գործունեության համար Էդուարդ Հարությունյանը ձերբակալվում և դատապարտվում է ազատազրկման (ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 20):

Այս խմբի հետ կապ ունեցած Սիրվարդ Ավագյանը, Ռաֆայել Օհանյանը, Էդմոնդ Ավետյանը, Ռաֆայել Պապյանը, Գեորգի Խոմիզուրին նույնպես հանդես են գալիս Խորհրդային պետության վարած քաղաքականության դեմ, գրում և տարածում են հոդվածներ, որտեղ քննադատում են Խորհրդային կարգերը, բարձրաձայնում մարդու իրավունքների խախտումների մասին (ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 26):

Հայաստանի հելսինկյան խումբն իր կարճաժամկետ գոյությամբ ոչ միայն ամբողջացրեց և սահմանեց Խորհրդային Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության այլախոհական գաղափարական ուղղվածությունը, այլ նաև Խորհրդային Հայաստանը մաս դարձրեց ընդհանուր այլախոհական գաղափարական ճակատին, որտեղ ներգրավված էին Խորհրդային տարբեր երկրներ: Հայկական այլախոհությունն ունեցավ թե՛ ներքին ազգային հարցերի շուրջ դրսևորումներ, թե՛ մարդու իրավունքների պաշտպանության համար պայքարի դրսևորում, որն ուներ միջազգային առանցքային կարևորություն և նշանակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային հարցերի մասին բարձրաձայնումը, Հայաստանի անկախության վերականգման և մարդու իրավունքների պաշտպանության համար պայքարը, ընդգրկուն կերպով իրենց մեջ էին ամփոփում 1960-80-ական թթ. Խորհրդային Հայաստանում ընթացած այլախոհական շարժումների գաղափարախոսական հենքերն ու գործունեությունների տրամաբանությունը: Ուսումնասիրելով այլախոհության դրսևորումները՝ կարող ենք փաստել, որ հայ հասարակության գործուն շրջանակների համար մշտապես առաջնային են եղել վերոնշյալ գաղափարները, որոնց առանցքի շուրջ են ձևավորվել այլախոհական մտքերը, ընդհատակյա կազմակերպությունները: Այս հարցերի մասին բարձրաձայնումը և դրանց լուծումների համար մղված դժվար և փորձություններով լի պայքարը հայ ժողովրդի մեջ ըստ էության կենսունակ պահեց Հայաստանի անկախության վերականգնման առաջնայնությունը, հայկական կորսված տարածքների՝ Ղարաբաղի և Նախիջևանի համար պայքարը, Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնումը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այլախոհության առաջին տարիներին հայ հասարակական շրջանակներում առաջնային դեր ու կարևորություն ուներ ազգային հարցերի մասին բարձրաձայնումը և հողային պահանջատիրությունը: Սակայն հայ հայրենասիրական-այլախոհական շրջանակներում տեղի ունեցած գաղափարական հասունացման արդյունքում, թեև շարունակվում էր պահպանվել ազգային հարցերի շուրջ նախկինում ամրապնդված գաղափարական մոտեցումները, այդուհանդերձ Հայաստանի անկախության վերականգման համար պայքարը ձեռք բերեց առաջնային նշանակություն և

կարևորություն: Այն կազմակերպված բնույթ ստացավ 1966 թ.-ից ԱՄԿ ստեղծումով, և շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը:

Սառը պատերազմում ԽՍՀՄ-ի պարտության և փլուզման արդյունքում հնարավորություն ունեցանք վերականգնել Հայաստանի անկախությունը: Նորանկախ հանրապետությունը, տարբեր վայրիվերումներով և ձախողումներով հանդերձ, առնվազն հանրային քաղաքականության առանցքում դրեց այն գաղափարական հիմքերը, որոնք հայկական այլախոհության գաղափարական ուղղություններն էին: Արդեն անկախ Հայաստանի Հանրապետության պայմաններում է ընթանում հայկական ազգային շահերի համար պայքարը, որը հայոց պատմության դարերի խորքից եկել և հասել է հայկական այլախոհության շրջան, այնուհետև մեզ՝ անկախ Հայաստանի Հանրապետության սերունդներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայոց Պատմություն (4th ed., Vol. 2). (2016). ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան.

Հարությունյան Շ. (2023). Այլախոհական շարժման առաջացման նախադրյալները խորհրդային Հայաստանում 1950-60-ական թթ.. Գիտական Արցախ, *4*(19).

Հարությունյան Վ. (2014). *Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում*. Վան Արյան հրատ., Երևան.

Հարությունյան Վ. (2022). *Քաղբանտարկյալի պատմություն*. Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ հրատ., Երևան.

Հայրիկեան, Պ. (2017). *Իմ բանտային յուշերից* (Ա 1965-1973). ԱԻՄ հրատ., Երևան.

Շահեն Հարությունյան անտիպ հուշագրություն (1st ed.). (n.d.). ԱՄԿ հիմնադրում և կազմակերպում.

Алексеева, Л. (2012). *История инакомыслия в СССР: новейший период*. Моск. Хельсинк. Группа, Москва.

Бобков, Ф. (2021). *Как готовили предателей*. Начальник политической контрразведки свидетельствует. . ., Родина, Москва.

Հայաստանի ազգային արխիվ

1. Ֆ. 1191, g. 20, գ. 2
2. Ֆ. 1191, g. 20, գ. 4
3. Ֆ. 1191, g. 20, գ. 6
4. Ֆ. 1191, g. 20, գ. 8
5. Ֆ. 1191, g. 20, գ. 2
6. Ֆ.1191, g. 20, գ. 23
7. Ֆ. 1191, g. 20, գ. 19
8. Ֆ.1191, g. 20, գ. 20
9. Ֆ. 1191, g. 20, գ. 26

REFERENCE LIST

Hayoc Patmutyun (2016). *(Armenian History)*, Hator IV, girk erkrord Yerevan. Volume IV, Book Two, (in Armenian).

Harutyunyan, Sh. (2023). Aylakhohakan sharjman arajacman nakhadryalnery Khorhrdayin Hayastanum 1950-60-akan tt. *(The prerequisites of the dissident movement in Soviet Armenia 1950-70ss)*, Erevan. (in Armenian).

Harutyunyan, V. (2014). Aylakhohutyuny Khorhrdayin Hayastanum *(Dissent in Soviet Armenia)*, Yervan. (in Armenian).

Harutyunyan, V. (2022). Qaghbantarkyali patmutyun *(Story of a political prisoner)*, Yerevan. (in Armenian).

Hayrikean, P. (2016). Im bantayin husherits' *(From my prison memoirs),* Girk' A 1965-1973, Yrevan, AIM. (in Armenian).

Unikal'nye memuary SHagena Arutyunyana (1-e izd.) *(A unique memoir of Shahen Harutyunyan).* (bez daty). Sozdanie i organizaciya MOT.

Aleksaeva, L. (2012). Istoria inakomisliya v SSSR: noveshiy period *(History of dissent in the USSR: the newest period).* Moskva. (in Russian).

Bobkov, F. (2021). Kak gotovili predateley *(How traitors were prepared).* Nachalnik politechiskoy kontrrazvedki cvidetelstvuet..., Rodina, Moskva. (in Russian).

Hayastani azgayin arkh'iv *(National Archive of Armenia)*, (HAA), (In Armenian)

1. F. 1191, c. 20, g. 2
2. F. 1191, c. 20, g. 4
3. F. 1191, c. 20, g. 6
4. F. 1191, c. 20, g. 8
5. F. 1191, c. 20, g. 2
6. F. 1191, c. 20, g. 23
7. F. 1191, c. 20, g. 19
8. F. 1191, c. 20, g. 20
9. F. 1191, c. 20, g. 26

ABSTRACT

IDEOLOGICAL TENDENCIES OF DISSENT IN SOVIET ARMENIA IN THE 1960S AND 1980S

HARUTYUNYAN SH.

There were three primary ideological paths followed by the dissident movements in Soviet Armenia that originated in the USSR in the 1960s of the 20th century. In Soviet Armenia, dissent was primarily organized around national issues such as the mention of the Armenian Genocide, the demands for the reunification of Karabakh and Nakhichevan to the motherland, preservation of the Armenian language, restoration of Armenia's independence, and defense of human rights. Objectives and plans of covert groups established in Soviet Armenia bore the

ideological imprint of these movements. The fight to restore Armenia's independence was of utmost significance in Soviet Armenia.

The purpose of this article is to present the ideological directions of Armenian dissent and their manifestations.

In order to realize the goal, the task was set to research and discuss the dissident organizations founded in Soviet Armenia and the individual approaches that integrated all the ideological directions of the Armenian dissident in their programs and activities.

Historical and comparative methods were used. Content analysis of state and personal archival materials, interviews, and memoirs was carried out.

It has been established that the dissident manifestations in Soviet Armenia had three key ideological directions, which had different priorities in different periods.

Key words - Dissent, land claims, Armenian Genocide, restoration of independence, "National United Party", "Armenian Youth Union", "Shant", Helsinki Group of Armenia

РЕЗЮМЕ

ИДЕОЛОГИЧЕСКИЕ ТЕНДЕНЦИИ ИНАКОМЫСЛИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1960-1980-Е ГГ.

АРУТЮНЯН Ш.

Три основных идеологических направления доминировали в диссидентских движениях Советской Армении, которые начали развиваться в СССР в 60-х годах. В Советской Армении инакомыслие основывалось на национальных проблемах, таких как упоминание Геноцида армян, требование воссоединения Карабаха и Нахичевани с родиной, сохранение армянского языка, восстановление независимости Армении и защита прав человека. Цели и планы тайных групп, созданных в Советской Армении, несли идеологический отпечаток на этих движениях. Тем не менее, для армянского диссидента было жизненно важно бороться за восстановление независимости Армении.которая началась в начале эпохи диссидентства и продолжалась до распада СССР.

Цель данной статьи – представить идеологические направления армянского инакомыслия и их проявления.

Для реализации цели была поставлена задача исследовать и обсудить основанные в Советской Армении диссидентские организации и отдельные подходы, интегрировавшие все идеологические направления армянских диссидентов в их программах и деятельности.

Исследование проводилось с использованием исторических и сравнительных методов. Проведен контент-анализ государственных и личных архивных материалов, интервью и мемуаров.

Установлено, что диссидентские выступления в Советской Армении имели три ключевых идеологических направления, которые в разные периоды имели разные приоритеты.

Делается вывод, что хотя диссидентское движение проявлялось вокруг трех важных, краеугольных идеологий, борьба за восстановление независимости Армении имела первостепенную роль и значение.

Ключевые слова- Инакомыслие, земельные претензии, Геноцид армян, восстановление независимости, «Национальная объединенная партия», «Союз армянской молодежи», «Шант», Хельсинкская группа Армении.